«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը

Հաստատություն՝ Երևանի <<Հեքիաթ>> հ. 96 մսուր-մանկապարտեզ>>

Դաստիարակ՝ Սուսաննա Գևորգյան

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

Երևան 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

1. Սաների հայրենաճանաչողության ձևավորման և զարգացման նախադրյալները……5
2. Հետազոտական աշխատանք՝ ուղղված սաների հայրենաճանաչողության զարգացմանը……11

Եզրակացություն……14

Օգտագործված գրականության ցանկ……16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը:

Մեր պետության զարգացման ողջ ընթացքում աճող սերնդի հայրենասիրական դաստիարակության նկատմամբ հոգատարությունը գրավել է առաջնային տեղ:

Երիտասարդության գաղափարական դաստիարակության բաղադրիչներից է հայրենասիրական դաստիարակությունը: Դրա անհրաժեշտությունը պայմանավորված է, երկրի պաշտպանության հետագա ամրապնդման, ազգային բանակի մարտունակության բարձրացմամբ: Բանակ- հասարակության փոխադարձ կապի ամրապնդման գործում նշանակալի դերակատարություն ունեն մեր հանրապետությունում գործող հասարակական պետական կազմակերպությունները

Պետության կողմից կրթադաստիարակչական աշխատանքներում սովորողների հայրենասիրական և դրա մաս կազմող ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրը մշտապես եղել է կրթական և ռազմական գերատեսչությունների ուշադրության կենտրոնում: Այդ աշխատանքների ճիշտ կազմակերպումը տարբեր ժամանակներում ստացել է տվյալ ժամանակին բնորոշ լուծումներ:

Դաստիարակչական աշխատանքը՝ որպես շարունակական և երկարատև գործընթաց, բավական ընդգրկուն է և ոչ համահավասար բոլոր ուսումնական հաստատությունների համար:

Պետության հռչակած հայրենասիրական դաստիարակության գործընթացը հիմք է ծառայում կարճաժակետ և երկարաժամկետ կրթադաստիարակչական, ռազմավարական ծրագրեր մշակելու համար: Սակայն, չնայած այդ հանգամանքին, պետական պատվերի և այդ պատվերի ակնկալվող արդյունքների միջև առկա ջրբաժանը հեռու է ցանկալիից:

Աշխատանքի նպատակը:

Մեր հետազոտության հիմնական նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել **սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը:**

Աշխատանքի խնդիրները:

Նշված նպատակն իրագործելու համար աշխատանքի հիմքում դրվել և լուծվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- ներկայացնել սաների հայրենաճանաչողության ձևավորման և զարգացման նախադրյալները,
- ներկայացնել հետազոտական աշխատանք՝ ուղղված սաների հայրենաճանաչողության զարգացմանը:

Աշխատանքի տեսական հիմքը:

Սույն աշխատանքում արծարծված խնդիրները և հարցադրումները ուսումնասիրվել են մի շարք աղբյուրների հիման վրա: Թեմայի հետ կապված հարցերը ուսումնասիրվել են և Յու. Ամիրջանյանի, Դ. Ֆ., Սամոյլենկովի և այլոց աշխատություններում:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Աշխատանքային տեքստը կազմում է 16 տպագրական էջ:

ԳԼՈՒԽ 1. ՍԱՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Հայրենասիրական դաստիրակությունը հայրենիքի հանդեպ սիրո դաստիրակությունն է: Նախադպրոցական տարիքի երեխաների հայրենասիրական դաստիրակության խնդիրները բավականին շատ են: Հիմնականը սովորում են սիրո զգացում իր հայրենի բնության, ընտանիքի և տան համար, ինչպես նաև ուղղակիորեն այն երկրի պատմությունն ու մշակույթին որտեղ նա ապրում է[1]:

Պետք է հաշվի առնել, որ յուրաքանչյուր երեխա զգում է զգացմունքների օգնությամբ իրեն շրջապատող իրականությունը: Ահա թե ինչու ցանկացած աճող սերնդի հայրենասիրական դաստիրակությունը պետք է սկսվի սիրո զգացումս իր հայրենի քաղաքի, բակի, մանկապարտեզի, երկրի նկատմամբ:

Հայրենասիրություն սերմանելու գործընթացը գաղափարական աշխատանքի անբաժանելի մասն է ու հիմնական խնդիրներից մեկը:

Դաստիրակի և ծնողի խնդիրն է երեխաների մեջ հնավառինս սրբացնել սերը հայրենի հողի նկատմամբ: Նրանց մեջ ձևավորել այնպիսի բնավորության գծեր, որոնք կօգնեն նրանց դառնալ արժանավոր մարդ և իրենց երկրին արժանի քաղաքացի:

Նախադպրոցական տարիքի երեխաների ծանոթությունը հայրենի քաղաքի, տարածաշրջանի հետ երկար և բարդ գործընթաց է: Դրական արդյունքի կարելի է հասնել միայն համակարգված աշխատանքով:

Երեխաներին պետք է սովորացնել սիրել իրենց քաղաքը հասկացնել որ իրենց քաղաքը հայրենիքի մի մասն է:

Հայրենասիրական դաստիրակության համար նախադպրոցական ուսումնական հաստատությունները օգտագործում են աշխատանքի տարբեր մեթոդներ և ձևեր՝ հաշվի առնելով երեխայի աշխարհայացքը: Այդ նպատակով արդյունավետ և հետաքրքիր աշխատանքներում ներառվում են զբոսանքներ, էքսկուրսիաներ, դիտումներ, դիտարկումներ, բացահայտումներ որոնք ավելի կմոտիվացնեն երեխաներին սյուն թեմայի ընկալմանը և յուրացմանը:

---

[1]Երեխաներին դաստիարակել ժողովրդական մշակույթի ավանդույթների վրա, Վոլգոգրադ 2008թ., էջ 47:

Հայրենասիրական զգացմունքների ձևավորումն ավելի արդյունավետ է եթե մանկապարտեզը սերտ կապ հաստատի ընտանիքի հետ։

Ընտանիքի հետ աշխատանքում մանկապարտեզը պետք է ապավինի ծնողներին, որպես երեխայի անհատականության ձևավորման իրավահավասար մասնակիցներ։

Հայրենաճանաչողության դաստիրակության նպատակն է կրթել հայրենասեր ով սիրում է իր հայրենիքը, հավատարիմ է հայրենիքին։

Ավագ նախադպրոցական տարիքում զարգանում են բարձր սոցիալական մոտիվներ և զգացմունքներ։ Այս ազդեցության արմատները գտնվում են ժողովրդի լեզվում, որ երեխան սովորում է երգերից, խաղերից տպավորություններով հայրենի բնության աշխատանքի սովորույթների մասին,որում նա ապրում է։

Հայրենաճանաչողության դաստիարակությունը դաստիարակների և սաների միջև մի գործընթաց է որն ուղղված է հայրենասիրական զգացմունքների զարգացմանը։ Սրա նպատակն է կրթել համոզված հայրենասեր, ով սիրում է իր հայրենիքը, հավատարիմ է հայրենիքին, պատրաստ է ծառայել և պաշտպանել հայրենիքը։ Երեխաների հայրենաճանաչողության դաստիարակությունը նախադպրոցական ուսումական հաստատության հիմնական խնդիրներից է։

Այս ուղղությամբ գոյություն ունի մեթոդաբանական գրականություն։ Դրա հիման վրա կրթական աշխատանքի այս ուղղությամբ կարելի է առանձնացնել առաջադրանքների մի ամբողջ համալիրը.

1. Երեխայի սերը բարձրացնել իր ընտանիքի, տան, մանկապարտեզի, քաղաքի կամ գյուղի. փողոցի նկատմամբ։
2. Երեխաների իմացություն իր արմատների մասին։
3. Երեխաների ծանոթացում քաղաքի պատմությանը և ենթակառույցներին։
4. Երեխաների ծանոթացում պետության խորհրդանիշներին դրոշ, զինանշան, օրհներգ։
5. Այցելել մշակութային վայրեր՝ հուշարձաններ, թանգարաններ։

Այս խնդիրները լուծվում են երեխաների գործունեության բոլոր տեսակներում խմբասենյակում, խաղերում, առօրյա կյանքում։Դրանք երեխայի մեջ դաստիարակում են հայրենաճանաչողություն։

Երեխայի հայրենաճանաչողության դաստիարակությունը մանկավարժական բարդ գործընթաց է: Այն հիմված է հայրենասիրության՝ որպես անհատական որակի ձևավորման վրա:

Յուրաքանչյուր տարիքային փուլում հայրենաճանաչողություն և հայրենասիրական դաստիարակության դրսևորումներն ունեն իրենց առանձնահատկությունները:

Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների մոտ հայրենասիրությունը սերմանելու նպատակն է ձևավորել նրանց բարի գործեր և արարքներ կատարելու անհրաժեշտություն:

Երեխաների հայրենաճանաչողություն ասելով հասկանում ենք մեծահասակի և երեխաների փոխգործակցությունը համատեղ գործունեության և հաղորդակցության մեջ, որն ուղղված է երեխայի մեջ մարդու համընդհանուր բարոյական որակների բացահայտմանն ու ձևավորմանը:

Դաստիարակի աշխարհայացքը, նրա անձնական օրինակը, դատողությունները, ակտիվ կյանքի դիրքը դաստիարակության ամենաարդյունավետ գործոններն են:

Եթե ուզում ենք, որ մեր երեխաները սիրեն իրենց երկիրը, իրենց քաղաքը պետք է նրանց ցույց տանք գրավիչ կողմից: Բայց չափահասի ոչ մի գիտելիք արդյունք չի տա, եթե նա ինքը չի սիրում իր երկիրը, իր քաղաքը, իր ժողովրդին:

Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնք թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը:

Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի և գրականության դերը՝ առանց նույնիսկ էականորեն տարբաժանելու մայրենի և օտար լեզուների նշանակությունը սույն խնդրի առնչությամբ:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը սաների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները սաների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի

դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն:

Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ սաները հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն:

Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում սանը ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են երեխայի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում:

Սաները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն:

Ժամանակակից հասարակությունն արմատական փոփոխությունների մի բարդ շրջան է անցնում: Դա անմիջականորեն ազդում է երիտասարդ սերնդի մտածելակերպի, գործելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա: Նա այդ գործընթացների մասնակիցն է, այդ արժեքների ժառանգորդն ու կրողը: Նրա առջև

ծառանում է նոր ժամանակի պահանջներին համապատասխան վերափոխվելու, կարողությունները զարգացնելու և իրացնելու խնդիրը: Ներկայումս կրթությունը վերաճել է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային անհրաժեշտ որակներ[2]:

Կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների և մեթոդների վերանայում, կրթության նկատմամբ պետական և հասարակական հոգածության արմատական բարելավում: Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը խորհրդային կրթական համակարգի ժառանգորդն էր և կազմավորվել էր նրա հենքի վրա: Խորհրդային Միությունում միասնական էին կրթական խնդիրները, մեթոդական սպասարկումը: Միասնական էր նաև արժեհամակարգը: Մեզ մնում էր միայն տեղայնացնել կենտրոնից եկած որոշումները: Անկախացումից հետո իրավիճակը կտրուկ փոխվեց: Կրթական համակարգի արմատական վերակառուցման պահանջը կախված էր օդում:

Փոխվեց ժամանակաշրջանը, փոխվեցին նաև արժեքները, փոխվեցին արժեքային կողմնորոշումները, նախասիրություններն ու պահանջմունքները: Նոր իրավիճակը համարժեք մոտեցումներ էր պահանջում: Նոր խնդիրներ առաջ եկան, որոնք հրատապ լուծման կարիք ունեին:

Շուկայական հարաբերությունների պայմաններում բազմաթիվ արժեքներ, որպես մանրադրամ, շուկա նետվեցին: Նորանկախ հանրապետության նոր սերնդի հասարակական կյանքի, արժեքների նկատմամբ ունեցած վերաբերմունքն ու բարոյական սկզբունքները տարբերվում էին նախորդներից:

Կյանքը կառուցվեց նոր կանոնների և նոր նորմերի վրա: Նոր սերնդի համար ժամանակակից աշխարհն իր արժեքային համակարգով բավականին բարդ ու անկանխատեսելի էր թվում: Կրթության հիմնախնդիրներով զբաղված մասնագետներին առաջադրված է ճշգրիտ որոշել և բյուրեղացնել այն գլոբալ արժեքները, որոնք անհրաժեշտ էին քսանմեկերորդ դարի քաղաքացուն: Իսկ որո՞նք են այդ արժեքները, և

[2]Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ, էջ 24:

ի՞նչ մեխանիզմներով էին դրանք հասցվելու սովորողին: Այսօրինակ հարցերը քննարկումների նյութ էին դառնում[3]:

[3]Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ, էջ 25:

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ՝ ՈՒՂՂՎԱԾ ՍԱՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

Հետազոտության ժամանակ կիրառել եմ ԽԻԿ- համակարգը, իրականացրել եմ ավագ խմբի երեխաների հետ: Պարապմունքը արձանագրվել է մեթոդիստի կողմից:

Աշխատանքս պլանավորել եմ համալիր ծրագրով, հաշվի առնելով տարիքային չափորոշչային զարգացման ոլորտը:

Միջավայրը -խմբասենյակ

Նյութերը – ՀՀ քարտեզ, դրոշ, զինանշան, օրհներգ, մանր և խոշոր կառուցողականներ, գլուխկոտրուկներ, նկարներ տեսարժան վայրերով, կրծքանշաններ, ասացվածքներ:

Պարապմունքի պլան.

Թեման-Իմ հայրենիքը Հայաստանն է: <<Իմ երկիրը>>

Պարապմունքի տեսակը՝ զրույց (2-3) պարապմունքի ընթացքում:

Նպատակը- Ծանոթացնել և իրազեկել հայրենիքի քարտեզի, ՀՀ դրոշի, զինանշանի, օրհներգի, մայրաքաղաքի մասին:

Խնդիրներ- Զարգացնել երեխաների կապակցված խոսքը, հաղորդակցումը, մտքերի փոխանակումը: Դաստիարակել սիրո և հպարտության զգացում: Զևավորել սեփական մտքերը պատճառաբանելու, դատելու, խորհելու, հիմնավորելու, ստեղծագործական պատմություններ հյուսելու երեխաների կարողությունները:

Ընթացքը- Խթանման փուլ

Առավոտյան հանդիպում- երեխաներ երբ դուք առավոտյան եկաք մանկապարտեզ ճանապարհին ի՞նչ շենքեր և շինություններ տեսաք: Այդ բոլորը կառուցված են մեր հայրենիք հողի վրա:

Այժմ եկեք մենք էլ միասին մանր և խոշոր կառուցողականներով կառուցենք մեր տունը, որտեղ ապրում ենք:

Մեթոդ՝ <<Մտածիր-զու՛յգ կազմիր – կիսվիր>> ռազմավարության միջոցով երեխաները մտքեր են փոխանակում:

Երեխա պատասխան- Իմը երկհարկանի է, - Ես ապրում եմ բարձրահարկ շենքի 3-րդ հարկում:

- Մեր շենքի բակում կա խաղահրապարակ և լողավազան: Յուրաքանչյուր երեխա իր զույգի լսածին տալիս է մեկ հարց:

Ե.պ.- Ձեզ թույլ են տալիս լողավազանում լողալ:

Ե.պ.- Ոչ: Արտահայտվում են խմբի երեխաները իրենց կարծիքները:

Իմաստի ընկալման - <<Բարձրաձայն ընթերցանություն>>

Երեխաները նստել են կիսաշրջանաձև: Ես գրատախտակին տեղադրում եմ մեր հայրենիքի տեսարժան վայրերի պատկերներով նկարներ և երեխաներին առաջարկում մի պատմություն հորինել այս նկարի շուրջ:

Ե.պ- Ես ծնողներիս հետ ամռանը հանգստացել եմ Սևանում: - Քույրիկիս դասարանի հետ գնացել եմ տառերի պուրակ: - Այսօր Էրեբունի թանգարանի մոտով եմ անցել…:

Երեխաների պատասխաներից հետո ընթերցեցի Սարմենի <<Հայրենիք>> բանաստեղծությունը և յուրաքանչյուր հատվածի մասին փակցրեցի համապատասխան նկարը (մեծ և փոքր սարեր, դաշտ, գետ, արև, ծաղիկ, ժպիտ, գիրք, մանկապարտեզ, գնդակ, ինքնաթիռ, աստղեր):

Կշռադատման փուլ- Երեխաներ ձեզ դուր եկավ այսօրվա մեր զրույցը:

Ի՞նչ նոր բան իմացանք:

Ե.պ.- Ես իմացա, որ Հայաստանի քարտեզը նման է աղջկա:

- Քարտեզի վրա տեսա կապույտ գույնով Սևանա լիճը:

-Ես արդեն կարող եմ ասել ի՞նչ է պատկերված զինանշանի վրա:

Ֆիզկուլտ դադար.

Հետազոտության վերջնարդյունքը.

1. Կհորինեն նկարների շուրջ նոր պատմություններ հայրենիքի մասին:
2. Կնկարազարդեն ուրվագծված տեսարժան վայրերը:
3. Կստանան նոր հանձնարարություններ կառուցողականներով կառուցելու:
4. Կայցելեն պատմամշակույթային կենտրոն:
5. Կծանոթանան հայրենիքի պատմության հետ:

Մեթոդիստի դիտարկում.

1. Թեմատիկ զրույցի միջոցով զարգացրեց երեխաների կապակցված խոսքը, ստեղծագործական միտքը:
2. Դաստիարակեց սիրո և հպարտության զգացում:
3. Սովորեցին օգտագործել պատկերավոր բառեր և արտահայտություններ հայրենիքի մասին:
4. Պարապմունքի ընտրված դիդակտիկ նյութերը համապատասխանում էր թեմային:
5. Դաստիարակի կողմից շատ կարևոր թեմա էր ընտրված, քանի որ հայրենաճանաչման առաջին սերմերը ցանվում են նախադպրոցական հաստատությունում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում հանգել ենք հետևյալ եզրահանգումներին.

- Ամփոփելով հարկ ենք համարում նշել, որ հայրենասիրություն սերմանելու գործընթացը գաղափարական աշխատանքի անբաժանելի մասն է ու հիմնական խնդիրներից մեկը։
- Դաստիրակի և ծնողի խնդիրն է երեխաների մեջ հնարաորինս սրբացնել սերը հայրենի հողի նկատմամբ։ Նրանց մեջ ձևավորել այնպիսի բնավորության գծեր, որոնք կօգնեն նրանց դառնալ արժանավոր մարդ և իրենց երկրին արժանի քաղաքացի։
- Նախադպրոցական տարիքի երեխաների ծանոթությունը հայրենի քաղաքի, տարածաշրջանի հետ երկար և բարդ գործընթաց է։ Դրական արդյունքի կարելի է հասնել միայն համակարգված աշխատանքով։
- Երեխաներին պետք է սովորացնել սիրել իրենց քաղաքը հասկացնել որ իրենց քաղաքը հայրենիքի մի մասն է։
- Հայրենասիրական դաստիրակության համար նախադպրոցական ուսումնական հաստատությունները օգտագործում են աշխատանքի տարբեր մեթոդներ և ձևեր՝ հաշվի առնելով երեխայի աշխարհայացքը։ Այդ նպատակով արդյունավետ և հետաքրքիր աշխատանքներում ներառվում են զբոսանքներ, էքսկուրսիաներ, դիտումներ, դիտարկումներ, բացահայտումներ որոնք ավելի կմոտիվացնեն երեխաներին սյուն թեմայի ընկալմանը կյուրացմանը։
- Հայրենասիրական զգացմունքների ձևավորումս ավելի արդյունավետ է եթե մանկապարտեզը սերտ կապ հաստատի ընտանիքի հետ։
- Ընտանիքի հետ աշխատանքում մանկապարտեզը պետք է ապավինի ծնողներին որպես երեխայի անհատականության ձևավորման իրավահավասար մասնակիցներ։
- Հայրենաճանաչողության դաստիրակության նպատակն է կրթել հայրենասեր ով սիրում է իր հայրենիքը, հավատարիմ է հայրենիքին։

- Երեխաների մեջ դաստրարակել, մարդասիրական վերաբերմունք, զարգացնել բարոյական պատկերացումներ բարության, կարեկցանքի, հոգատարության, անկեղծության մասին: Տարբեր ժողովուրդների նկատմաբ դրական վերբերմունքի , ինտերնացիոնալ զգացմունքների հիմքները դրվում են ազգայինի մեջ համամարդկայինի հիմունքը ընդգծելու միջոցով:
- Ավագ նախադպրոցական տարիքում զարգանում են բարձր սոցիալական մոտիվներ և զգացմունքներ: Այս ազդեցության արմատները գտնվում են ժողովրդի լեզվում, որ երեխան սովորում է երգերից, խաղերից տպավորություններով հայրենի բնության աշխատանքի սովորույթների մասին,որում նա ապրում է:
- Հայրենաճանաչողության դաստիարակությունը դաստիարակների և սաների միջև մի գործընթաց է որն ուղղված է հայրենասիրական զգացմունքների զարգացմանը: Սրա նպատակն է կրթել համոզված հայրենասեր, ով սիրում է իր հայրենիքը, հավատարիմ է հայրենիքին, պատրաստ է ծառայել և պաշտպանել հայրենիքը: Երեխաների հայրենաճանաչողության դաստիարակությունը նախադպրոցական ուսումնական հաստատության հիմնական խնդիրներից է:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մանկապարտեզի ավագ խմբի (5-6 տարեկանների) կրթական համալիր ծրագիր, Երևան 2008թ:
2. Չիբուխչյան Ս., Սարգսյան Լ. , Մայրենի լեզվի պարապմունքները մանկապարտեզի ավագ խմբում, Երևան 2011 թ.:
3. Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ.:
4. Երեխաներին դաստիարակել ժողովրդական մշակույթի ավանդույթների վրա, Վոլգոգրադ 2008թ.:
5. Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ.:
6. Ղազարյան Կ., Ինտեգրված երաժշտական պարապմունքները մանկապարտեզում: